ԵՒ ՈՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ -
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

75ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԸ *Հայ ազգի մամուլին երիցագոյն ներկայացուցիչն՝* 1917*ին կը սկսի նոր շրջան մը։*

ԲԱԶՄԱՎԷՊԻ *Նոր շրջան՝* ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ *և* ԳԻՏԱԿԱՆ *պատկերներու հոխութեամբ և* ԴՊՐՈՑԱԿԱՆ *նիւթերու առատութեամբ։*

ԲԱԶՄԱՎԷՊԻ *նոր խմբագրութիւնը՝ յարգելով իւր նախորդաց գործունէութեան ծրագիրը՝ պիտի ճգնի Գիտական, Գեղարուեստական, Բարոյական և Դպրոցական մասնաճիւղերու աւելի ոյժ տալ. հետևաբար պիտի ջանայ, Վարդապետականը՝ Գործնականին, Բանասիրականը՝ Գիտականին, Գեղարուեստականը՝ Մանկավարժականին և Օգտակարը՝ Զուարճալիին հետ հաշտեցնել։*

ԲԱԶՄԱՎԷՊը *Հայ Ազգիս բարոյական, իմացական, կենցաղական զարգացմանը նպաստելու դիտաւորութեամբ, պիտի բովանդակէ Համազգային Ուսմանց և Գիտութեանց և Գեղեցիկ Դպրութեանց ամէն տեսակ այժմէութիւններ՝ ինքնագիր կամ թարգմանածոյ։*

ԲԱԶՄԱՎԷՊը *որպէս զի ամբողջ Հայ մտքին՝* 1900*էն մինչև ցարդ ի լոյս ընծայած կարևոր արտադրութիւններուն և հրատարակութիւններուն տեղեակ ընէ իր ընթերցողները, պիտի աշխատի* ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԽՕՍԱԿԱՆ *բաժնին մէջ՝ խմբագրութեանս նուիրուած ամէն գրքերու և* ՀԱՅՏԻՊԷՆ *կամ* ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ, ՀԱՅ *հեղինակութիւններու կամ գեղարուեստական արտադրութիւններու վրայ, հակիրճ, բայց լուրջ տեսութիւններ հրատարակել։*

ԲԱԶՄԱՎԷՊը 1917*ի շրջանին մէջ՝ պիտի ջանայ իր անուան հաւատարիմ մնալով՝ Բազում վէպեր՝ այսինքն գիտորիւներ մատուցանել՝ գրասէր և ընթերցասէր Հայորդւոց և անգամ մը ևս գնահատուիլ իբրև* ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ *հայկական մտքի։*

ԲԱԶՄԱՎԷՊը *ամէն ամսուան մէջ* 50 *էջերէ բաղկացեալ լոյս պիտի տեսնէ և անմիջապէս պիտի ուղարկուի բաժանորդներու և մեզի հետ պարբերական հրատարակութիւններ փոխանակողներու։*

ԲԱԶՄԱՎԷՊի *պրակներու առաքման և ընդունելութեան յապաղումները այլևս առաջիկային՝ կամ թղթատարութեանց կամ պետական նոր օրէնքներու տրամադրութեանց պիտի վերագրուին։*

ԲԱԶՄԱՎԷՊի *խմբագրութիւնն և Տպարանիս վարչութիւնը ընդհանուր սղութեան անտեղիտալի պահանջին հանդէպ, և բազմաթիւ արգելքներու և ծախսերու հրամայական հարկին տակ՝ յանձն առնելով ամէն զոհողութիւն, ամենաչափաւոր պայմաններով բաժանորդներ կ'արձանագրէ։*

digitised by A.R.A.R.@

ԿԱՐԵՒՈՐ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Մեր «Բազմավէպ Հանդիսարան»ը՝ սիրայօժար կը փոխանակենք՝ ազգային ոգի և է պարբերական թերթերու, լրագիրներու, և հայկական խնդիրներով և գրականութեամբ զբաղող օտարալեզու հրատարակութեանց հետ։

Կը խնդրենք մեր ազգային հեղինակներէն՝ որ հաճին մեր հասցէին ուղարկել՝ երկերկու օրինակ այն գրքերէն, որ 1900էն մինչև 1917ի շրջանին մէջ հրատարակուած են, թէ՝ հայալեզու և թէ՝ օտարալեզու, պայմանաւ որ վերջինս հայկական խնդիրներով զբաղի։ Մենք սիրայօժար կը փոխանակենք զանոնք՝ մեր Ցպարանին համարժէք ոգի և է գրքերու հետ՝ եթէ փափաքին ղրկողները. և նոյն իսկ Բազմավէպի մէջ՝ ղրկողներու անունով՝ ազդեր և ծանուցումներ կը հրատարակենք, այդ գրքերու մասին։

Մանաւանդ թէ՝ մեզի համար անհրաժեշտ և օգտակար նպատակին համար, բանիմաց և ազգասէր անձերէն կը խնդրենք՝ որ բարեհաճին սոյնպիսի գրքերէն նուիրել մեր Միաբանութեան «Հայկական Գրադարանին», որ իւր ճոխութեամբը բաց է՝ ոգի և է ուսումնասէր և գրասէր անձերու առջև, որոնք ուրիշ տեղ չեն կրնար գտնել հայկական գրքերու կատարեալ հաւաքածոյ մը։ Անտարակոյս մեր պարտականութիւնը պիտի ըլլայ՝ նուիրատուին և նուէրին անունները՝ շնորհակալութեամբ հրատարակել։

Բազմավէպի կանխիկ վճարող բաժանորդներէն կը խնդրենք իրենց որոշ հասցէները, որպէսզի զանոնք տպելով՝ այնպէս ղրկենք ծրարները։

Խմբագրութիւնս պատասխանատու չըլլար, երբ մեր ուղարկած թերթերը համբան կորսուին։ Պրակներն անկորուստ ստանալու համար, հարկ է յանձնարարեալ բաժանորդագրուիլ, որուն համար պէտք է տարեկան գնոյն վրայ աւելցնել ֆր. 3։

Բազմավէպի համար տասն հոգի բաժանորդ գտնողներուն՝ տարեկան Բազմավէպ մը նուէր կ'ընենք. և կամ մեր լիակատար գրացուցակի մէջէն 10 ֆրանքի արժողութեամբ խնդրուած գրքեր կը ձօնենք։

Դարձեալ՝ միանուագ 100 ֆրանքէ աւելի արժողութեամբ մեր Ցպարանին գիրք ապսպրող անհատներու՝ տարեկան «Բազմավէպ»ի մը բաժանորդ կ'արձանագրենք։

Ամէն բաժանորդներու հասցէները տպագրուած և կպցուած պիտի ըլլան ղրկուելիք ծրարներու վրայ. իւրաքանչիւր բաժանորդ իր բաժանորդագրութեան կարգին համեմատ՝ առաջնութեան սեպհական թիւը պիտի ունենայ՝ հասցէին վրայ տպուած. հետևաբար կը խնդրենք յարգելի բաժանորդներէն՝ որ ներփակ քարտը ամբողջացնելով՝ փութացնեն խմբագրութեանս հասցէին.

ԲԱԶՄԱՎԷՊԻ

ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առանձնականներու	համար	ֆրանք	15, —	Տոլար	3, —	Ռուպլ	6, —
Գրավաճառներու	»	»	13, 50	»	2, 70	»	5, 30
Ուսուցիչ և ուսանողաց	»	»	10, —	»	2, —	»	4, —
Ազգային դպրոցներու	»	»	5, —	»	1, —	»	2, —
Որբանոցներու	»	»	2, 50	»	0, 50	»	1, —

digitised by A.R.A.R.@